

չարունակել և թեւարկել ամենանուիրական իրաւունքները Հայոց որոնց մէջէն կը համրուին այնքան հայրեր ու մայրեր, որոնք կրեցին բարբառոս հարստահարիչներու կատաղութենէն՝ ինծի վիճակուած ճակատագիրը, և չ'ունեցան Հայրենեաց համար եղած զոհին մխիթարութիւնն ու փառապատկը:

Զեմ տարակուսիք որ Զեր վսեմութիւնը պիտի ընդունի սիրալոյսը իմ շնորհակալութիւններս և աղաչանքս, և այդ վստահութեամբ կը յայտարարեմ զիս Զեր վսեմութեան, ևն:

Հեռանալով այսպիսի աննման անձնաւորութենէ մը, ինչպէս որ էր իշխան Ումպէշթոյ Բագրատունի, իր խանդակաթ ծնողաց և ազգականաց կակածանաց և արտասուած հետ կը խառնենք նաև մերինները, և այս համեստ տողերը՝ իբրև փունջ մը ծաղկանց ի սրտէ Միաբանութեան, կը նուիրենք իր սիրելի յիշատակին, որ անմահ ու անթառամ պիտի մնայ միշտ մեր մէջ:

Հ. Ս. ՏԵՐ-ՄԱՐԿԵՍԵԱՆ



ՄԵԾ ԱՌԵՂԾՈՒՄԸ՝



Հանդէպ տեսարանին՝ զօր կը պարզէ մեր աչաց առջև ամառնային գեղեցիկ գիշեր մը, երբ ամէն բան կը ներհէ երկրիս վրայ և երբ բնութեան լուսթիւնը կը հրաւիրէ խորհելու և զննելու, սիրելի ընթերցող, երբեք չ'ես ուզած անձկալի աչքերով քննել, հետազոտել աստեղագաւոր երկնից զաղտնիքը: Երբեք չ'ես ունեցած փափաք զոհացնելու քու օրինաւոր հետաքրքրութիւնդ այս կէտիս վրայօք, գէթ չ'ես ուզած, ճանչնալ Աստեղագրութեան հազարաւոր տարիներէ ի վեր մարդկութեան առջև դրած ամենահրապուրիչ խնդիրնեքու լուծումը:

Այս երկնակամարը՝ ինչպէս գիտես եւ ընդթ մըն է, Բոլոր աստղները, սկսեալ ամենէն աւելի փայլուններէն մինչև ամենէն աւելի նուաղները, որոց լոյսը կը փալկի ի երկնքին խորը, բոլոր այս արփիները,

նոյն իսկ անոնք որոնք մեր ուղղակի տեսութենէն կը վրիպին և զանոնք հեռադէտն կը պարզէ մեր զարմացած նայուածքին առջև, բոլոր այս լուսաւոր կէտերը որ կը տպաւորուին մեր լուսանկարի ապակիներու վրայ, բոլոր այս հեռաւոր մարմինները՝ այնքան արեւներ են շոյալօրէն նետուած միջոցին խորը:

Մեր Արեւային դրութիւնը, այն՝ որ իբր կեդրոն ունի մեր Արեւ, կղզեակ մըն է կորսուած այս անհուն արշիպեղազոսի մէջ. ինքն իսկ պարզ աստղ մըն է այս երեւակայական համախմբին, իոնարհ զինուոր մը՝ երկնային մեծ բանակին:

Ինչ տեղ կը զբաւէ ամբողջութեան մէջ, ՈՐ կողմը կը տարածուի իւր տրեւութիւնը:

Երկիրս՝ որ մեզի թուի այնքան լայնածաւալ, փոքր աւագէ հատ մ'է կապեալ իւր Արեւուն ձգողական անփոփոխելի օրէնքներով, Երբեմն սա ալ կը փայլէր իբր փոքր աստղ մը՝ երկնքի անսահմանութեան մէջ, իր քոյր մոլորակներուն քով, կազմելով անոնց հետ օրուան աստղին լուսաւոր ջրախումբ մը. բայց, դարեւու սահելովն, միջոցին ցուրտը թանձրացոց իր կեղևանքը, անոր մակերեսին վրայ այն ատեն տեսնուեցաւ կեանքը, և մենք խորհող փոշի՝ վերջին եկողներս, այն դիւրաբեկ կեղևին վրայ, սողալով նուրբ կարծրացած մաշկի մը վրայ, հաճ օղաչունք ենք այս սկար նաւին:

Առանց մեր անդրադառնալուն կը ճառապարհորդենք աստեղամէջ միջոցին մէջ. վասն զի Երկիրս ոչ միայն տարուան մը մէջ շրջան կ'ընէ իր Արեւուն ճառագայթներու մէջ, այլ այս մեծ աստղն զմեզ կը տանի հետը երկնքին խորը:

Մեր առջև բացուած լայնաբաց դատարկութեան մէջ կ'լինանք, Պիտի չհանդիպէ՞ք արգելքի մը մեծղի պարունակի վրայ զոր կ'ընթանանք:

Ինչպէս նաւապետ մը կը հսկէ իր նաւին ընթացքին վրայ, աստեղագէտն անդադար աչքը իր զօրաւոր հեռադիտին վառարանին վրայ, անհանգիստ կը դիտէ Երկրիս անկանոն ընթացքը, իւր ետեւ աստղները կը

հեռանան, կը փոքրկանան և կը կորսուին աստեղային մեծ գիշերուան մէջ. ընդհակառակն, առջևի կողմը՝ կարծես ճամբան կ'ընդարձակուի և թուի թէ աստղները դէպի մեզ կը գահավիժեն. ոմանք արագ կ'անցնին մեր քովէն և միշտ կ'իյնանք, ի՛նչ կ'երթանք:

Միլիոնաւոր տարիներէ ի վեր գործարիւն իմն ծածուկ՝ զմեզ իրեն կը ձգէ և կը գահավիժէ անդունդին մէջ, և այս յորձանապոյտ անկումը կը ներգործէ երևակայական ընթացքի մը վրայ: Ինչ են արդարեւ մեր ամենաերազ շարժումները բաղդատամբ մեր ընթացքին: Մեր սրընթաց կառախումբերն 120 հազարամետրը չեն անցնիր ժամուան մէջ, մեր սաւառնակներն կը ճեղքեն զրեթէ կրկին երազութեամբ: Թնդանօթի բերնէն ելլող ուսմբը կը սուրայ 900 մետր երկվայրկեանի մէջ, երևակայեցէթ թէ կարենան պահել իրենց նախնական արագութիւնը, պիտի ընթանան միայն 54000 մետր վայրկեանի մէջ, 3240 ՀՎմ. ժամը. ընթացք կրիայի բաղդատամբ Երկրիս թռիչին որ երկվայրկեանի մէջ 19 ՀՎմ. 400 մետր՝ զմեզ կը տանի, 69840 ՀՎմ. ժամը և մէկ միլիոն 676 հազար ՀՎմ. օրը:

Հակառակ այս ահագին տեղափոխութեան, ինչպէս երկինքը չփոփոխուի տարուէ տարի:

Ամէն երեկոյ, արդարեւ, կը դիտենք հիացմամբ բեռնաստեղ մօտ Վիշապն որ կը տարածէ իր երկար գալարումն ընդ մէջ փոքր և մեծ Սայրերուն՝: Աշնան գեղեցիկ գիշերները՝ Հայկն ցոյց կը դնէ իւր մէջքի կամարը Յարդգողի մօտ. Բոյլըի՝ ոսկէ փռչին կը ցանէ ցուլացող կրակները Յուլին մէջ. Հիատը՝ զոր Վիրգիլիոս կ'երգէ իւր մշակականի մէջ. կը փայլին Հոմերի ժամանակին նման, և փալփուեն Սիրիոս կը շողշողայ մեծ Շան մէջ, նոյնպէս ինչպէս երբ եգիպտացի քուրմերը կը սպասէին իր երեման Միմփիսի բարձր դիտարանէն:

Եւ սակայն եթէ Երկիրս կը տեղափոխուի այն երազութեամբ ինչպէս մեզի կը

յայտնեն աստեղաբաշխական հաշիւները, որչափ միջոց չենք կտրած անցած փարաոններու հեռաւոր ժամանակներէ ի վեր, ինչո՞ւ երկնային տեսարանն չէ փոխուած մեր աչաց:

Եւ եթէ, սակայն, աչաց նշմարելի փոփոխութիւն մը յառաջ եկած ըլլար աստեղային աշխարհի մէջ աստեղագէտներն պիտի շնշանակէին այս երևոյթն:

Նայէ չորս կողմը: Մարդկան մեծամասնութիւնը, նոյն իսկ ուսեալ դասակարգը, ընութեան իրերէն ոչ ինչ չեն ճանչնար. կ'ապրին Երկրիս վրայ ինչպէս թռչուններ վանդակի մէջ. անգիտանալով, բոլոր իրենց գոյութեան ժամանակ, տեղն ուր են, տիեզերաց մեծ օրէնքները, դերն զոր սահմանուած են կատարելու, առանց երբեք նայիլու իրենց շուրջը՝ հիմախառ համար արարչագործութեան սքանչելեաց վրայ:

Երբեմն մարդկային միտքը աստղները կը ներկայացնէր իբր ոսկիէ գամեր անհուն ճամուկի մը վրայ գամուած, և կամ կ'երևակայէր զանոնք իբրեւ կանթեղներ կախուած կապոյտ կամարէն: Մեր աստեղագիտութիւնը ջնջեց այս նախնական պատրանքները, սակայն լքափանցեց զանգուածներու մէջ, և մեր զպրոցէն ելլող տղայ մը աւելի բան չգիտոր երկնից վրայ քան եթէ ապրած ըլլար հին Յունաստանի ժամանակներուն մէջ՝:

Եւ սակայն մարդկային մտաց բոլոր ծանօթութիւնները կը դառնան ներկայ ժամանակիս դէպի աստեղագիտութիւն որ բոլոր գիտութիւնները կը միացնէ մեծդի դրութեան մը:

Ինչպէս կրնանք անտարբեր ձեռք վրէժովի խնդրոց առջև զորս կը յուզէ, չփնտռել գէթ ճանչնալ անոր հանած հետեանքները. ինչպէս անցնիլ այս վեհ գիտութեան ցովէն ատանց կենալու անոր սքանչելիքներու վրայ հիանալու համար:

Աստեղագիտութեան շնորհիւ, մարդ զինքը Երկրիս վրայ կաշկանդող կապանքներէ ազատած, կրցաւ սլանալ երկնային միջոցներուն մէջ, և կտրել անցնիլ տիե-

զերքը, այցելել այս հեռաւոր աստղինք-
րուն զորս մեր ընկալուչները (cliché)
կը տպաւորեն միլիոնաւորներով, թո՛ւր
դէպի այս միգամածներն ուր կը ծնանին
աշխարհներ, այն Յարդգողին մէջ՝ որուն
նուազ լոյսը կը շրջապատէ փոսփորական՝
մանեկաւ այն կամարը՝ որ թուի փակել
զմեզ ամէն կողմէ:

Աստեղագիտութիւնը մեզի կը սովորեցնէ
թէ բնութեան մէջ ամենայն ինչ կը շար-
ժի, ինչպէս մեր Արեւը, աստղները կը
զահաւիթին աշխարհի սկիզբէն ի վեր ի-
րենց դիմաց գծուած ճամբուն վրայ: Ո՛ւր
կ'երթան իրենց կարգին՝ իրենց կազմած
խմբերը դիպուածի՝ գործ են. և կամ կայ
օրէնք մը իրենց բաշխման:

Մեր գիտութիւնը պարզած է տեսանե-
լի տիեզերաց մեծղի ծրագիրը:

Դարձեալ իմէ ուշադրութիւնիս դարձը-
նենք մօտէն մեզի հետ վերաբերութիւն ու-
նեցող խնդրոց վրայ, գիտութիւնը մեզի
պիտի բացատրէ՝ թէ ինչո՞ւ երկինքը կար-
ծես ամբողջովին կը դառնայ մեր շուրջը,
ինչպէս տարւոյն ամէն եղանակ մի և
նոյն տեղերն կը բերէ մի և նոյն համաս-
տեղութիւնները. ինչո՞ւ համար Արեւ հունձ-
քի ժամանակ բարձրացած կ'անցնի մեր
գլխու վերեւէն. ինչո՞ւ համար կը նուա-
զեցնէ իրեն ընթացքին՝ բարձրութիւնը,
երբ այգեկութ ընողն կը քաղէ խաղողին
ողկոյզները. ինչո՞ւ համար ամառն, ինչո՞ւ
համար ձմեռն իւր ձիւներով և սառերով:
Եւ այս Արեւն ինչ է, ինչ նիւթեր շա-
րունակ կը անուցանեն այս զօրեղ վառա-
րանը: Իսկ գիշերուան այս աստղը դեղ-
նորակ Անահիտն (Poebé) զոր երգեր են
ամէն բանաստեղծներ, ինչ է պատճառն
անոր փոփոխ երևոյթներուն:

Ներկայիս շնորհիւ մեր հեռագէտներուն
կ'ուսումնասիրենք անոր դարաւանդները և
լեռները:

Կրնանք ապրիլ անոր հրաբխային հո-
դին վրայ, այն վրդովեալ բնութեան մէջ:
Մեզի մօտ այդ երկրին վրայ կան խոր-
հող էակներ:

Մարդկային միտքը որուն հետաքրքրու-

թիւնը միշտ արթուն է, արդարեւ այս
խնդիրները պէտք եղաւ առաջին օրէն
ջննել, երբ իրեն տրուեցաւ աստեղեայ
երկնից պայծառութիւնները դիտելու:

Սիրելի ընթերցող, հնութեան մեծամեծ
գիտնականներէն աւելի երջանիկ ես, և
օգտուելով երկար դարերէ ի վեր բարդուած
ուսումներէ, քեզի բաւական պիտի ըլլայ
աչք մը տալ այս էջերուն¹⁰, ստոյգ ծանո-
թութիւն մը ունենալու համար տիեզերքի
կազմութեան վրայօք արդի գիտութեան
հանած հետեւանքներուն:

Բայց ուսկի՞ց սկսելու է մեր խուզար-
կութիւնը: Երկինք անսահման է, աստղ-
ները բազմաթիւ են, որո՞ւ պէտք է տալ
նախընտրութիւնը:

Գրեթէ հաստատութեան բոլոր փայլուն
աստղներն՝ արդէն ըսինք թէ, մերինն
նման արեւներ են, կեդրոններ ահաւոր
ձգողութեան որոնք կը սփռեն յատուկ
լոյս մը և իրենց մօտ կը բռնեն աւելի
փոքր մարմիններ որոնց աստեղագէտները
մոյրտակ անուն կուտան:

Աստղ մը և իր շուրջը դարձող մոլորակ-
ները կը կազմեն դրոշխ մը: Երկինքի ընդ-
հանուր աստեղակամարի՝ աշխարհաց այս
վիճակագրութեան մէջ, զոր 18 դիտարա-
նեն¹¹ քառորդ դարէ մը հազիւ սկսած, են
թուել ուսանց մոլորակները հաշուի տակ
առնելու:

Աստղներու այս ահագին հեռաւորու-
թեան մէջ, իրենց մոլորակները աննշա-
րելի կը մնան. կեդրոնական աստղը միայն
կը ներկայացնէ բոլոր դրութիւնը: Սա է
զուլիս ընտանեաց որ կ'արձանագրուի աս-
տեղային ցանկերու մէջ:

Ուրեմն, մեր Արեւն ըլլալով նոյն տիտ-
ղոսով աստղ մը նման իւր երկնային ցոյ-
րերուն, ինքն ալ կը նախագահէ ճշմարիտ
դրութեան մը, սակայն սա զմեզ աւելի
հետաքրքրողն է, վասն զի մենք Արեւային
դրութեան մասն կը կազմենք:

Մեր Արեւուն չորս բոլորը մաս կուզան
ուրեմն, փոքր մարմիններ, փոքրագոյն
նոյն իսկ բաղդատմամբ մեր մեծ կեդրոնա-
կան աստղին, ասոնք իր մոլորակներն են:

Ներկայիս աստեղագետները գտան ուժ գլխաւոր մոլորակներ: Երկրիս այս մերձաւոր աշխարհները դիւրին են երկնքի մէջ գտնել:

Չնն շողջողար աստեղաց պէս, և նոյն իսկ տկարագոյն դիտակ մը ուղղուած աւստնց վրայ միայն, ձեզից ցոյց պիտի տայ փայլուն սկաւառակ մը, սակաւ կամ աւելի լայն ըստ մեծութեան մոլորակին և հեռաւորութեան¹⁴:

Դուք կը ճանչնաք ինչ ինչ համաստեղութիւնք, ինչպէս մեծ Սայլը, Աթոռը¹⁵ կամ քառակուսի թռչման Ձին¹⁶, նկատած պիտի ըլլաք որ երկինքի շարժումը չիփոխեւ անոնց ձեւը և անոնց պատկերը:

Աստղները կը մնան ուրեմն միշտ տարւոյն սկիզբէն մինչև վերջը նոյն հեռաւորութեան վրայ, նկատմամբ մին միւսին, իայց, այսպէս չեն մոլորակները: Երեկոյ մը կը տեսնէք զանոնք փայլիլ այս կամ այն աստղին քով, և երկրորդ օրը անոնք այլևս հոն չեն, իրենք ճանապարհորդած են ձեր երկու դիտողութեանց միջոց: Հիներուն անծանօթ չէր այս մասնականութիւնը, նաև տուած էին ճիշդ այս աստեղաց մոլորակ անունը, որ քախառակներ նշանակէ:

Իրականութեան մէջ մոլորակները բաւական երազ կը դառնան Արևուն չորս կողմը, ձեր ստուի մը վրայ տափակ դրած գրպանի ժամացոյցին սլաքներուն հակառակ դիրքով: Ասոնք ենթակայ են ողորդութեան շարժման մը, որ կը կատարուի աւջէն դէպի ձախ: Իսկ հակառակ դիրքով եղած շարժումը կը կոչուի յետդարաց, որ կը համապատասխանէ երկնքի ընդհանուր շարժման:

Աւթ մոլորակները որ կը կազմեն խշորկէն մասն Արևու տնորութեան, արդէն զանոնք կը ճանչնաք, գէթ անունով, բայց անօգուտ չըլլար զանոնք թուել իրենց կեդրոնէն ունեցած հեռաւորութեան կարգաւ:

Նախ փայլածուն փոքրագոյնը, ապա Արուսեակը մեր արշալուսոյ փայլուն աստղը, մերթ ազաւտեան աստղ (առաջալոյս),

մերթ երկնայեան աստղ (գիշերավառ): Երկիրս ուր կը բնակինք և որ ձգտեալ է աւելի քան 149 միլիոն Հզմ. հեռու Արևէն: Խորհրդաւոր Հրատն իր կարմրորակ ցամաքներով, սառուցեալ բևեռներով, փոփոխ բուսաբերութեամբ, թերևս իւր բնակիչներով, Հսկայ Լուսնթագն 1300 անգամ աւելի մեծ քան Երկիրս: Երեկոյն իր բազմաթիւ մանեակներով. Ուրանոս և Պոսիդոն վերջապէս կորսուած աւելի քան չորս երկրիւր բիւրամետը հեռի Արևէն:

Ապա կու գան աստղատիպներն որոցմէ ոմանք հագու գաւառակի չափ են, թաւառակալն զգաւորներն, Թոնիչ աստղներ, տիեզերական փոշիներ շրջողք իբր մունքը գորեղ վառարանին չորս կողմը:

Այսպիսի է արևային դրութիւնը, աշխարհ անհամեմատաբար փոքր՝ որուն մէջ կը բնակինք:

Երկնային այս կղզեակէն է որ պէտք է սկսուի Աստեղագիտութեան ուսումը:

ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ԹԱՐԳԱՆՁԻՆ



1. Այս յօդուածն Թարգմանեցինք Quelques heures dans le ciel համբաւաւոր «Abbé Thomas Moreux»-ի գիրքէն ինչ ինչ ծանօթութեան միայն աւելցնելով հեղինակին միտքը ուղիղ հասկընալու համար: Սա նշանաւոր աստեղագետներէն կը համարուի և է Տեսուչ Բուրգը (Bourge) քաղաքին դիտարանին: Գաղղիոյ տէրութիւնը երկու անգամ խաւարած է զինքն ըննելու բոլորական խաւարումը: Մին Սպարիս 1900ին, և երկրորդ անգամ Սփաք Արքիէն 1905ին, Թէ և հեղինակը ծանօթ է Եւրոպացւոց, բայց մեր ազգայնոց թիչերուն ծանօթ ըլլալով ինքը և իր գրութիւնը, այս Թարգմանութիւնն իբր նոյնը միայնոց կ'ըմբայնէ:

2. Հեղինակը կը գրէ. Une force inconnue. Եղբի՛ Ե զարուս մէջ Եղի՛ աղանգոց գրոց մէջ, էջ 17, քրած կը տեսնենք «Ձօրութիւն իմն ծածուկ», Ահա երկու պարզ միտքեր ասան և հինգ դար իբրմէ հեռու մի և նոյն բացառութիւնը կ'արտայայտեն:

3. Հիմաք չէ զիթիկ այս Արևու ճիւղերը: Երկիրս Արևուն չորս բոլոր քրած ընթացքին հետ, որ 29600 մետր է կրկնաչափնէ մէջ:

4. Մեր նախնիք Սայլն կամ Սայլք սովոր են կոչել մեծ և փոքր Արջերու համաստեղութիւնքը: այսգէս մեծ Արջին համար՝ Սայլն, իսկ փոքր Արջին համար՝ Միւս Սայլ կոչեն: Տես Հին հուսարք Հայոց, էջ 142:

5. Հայկ համաստեղութիւնը Անան արեւոյսյոյն առաջ կը ծագի. այսպէս Սեպտեմբերին առաւօտեան 1¹/₂ ին հորիզոնէն վեր հազիւ բարձրացած է ամբողջովին. իսկ Նոյեմբերին կէսին ժամը իննին յետ միջօրէի ծագած է արդէն. որով այնքան գեղեցիկ գիշերները՝ Նոյեմբերի համար հասկերնալու է, իսկ մեհուսան գիշերները միջօրեականի մտարեր կը զանուի:

6. Բոլլը՝ ըստ Խորենացոյ աշխարհագրութեան «պղատեան» է Նշմանաւոր Pleiades խումբը և ըստ նախնեաց Բագմատեան:

7. Հիւսիսը՝ է ուրիշ խումբ մը աստեղաց՝ Յուլին զիստ վրայ աւելի նուազ լուսով քան Բոլլերը:

8. Այս պարբերութեանը մէջ կուզէ հասկեցնել հեղիւ. նակը թէ աստեղաց զանգուածոց վրայ գիտութիւնը շատ յառաջդրուած ըրած է, Նոյնչափ գիտէ մեր դպրոցէն ելլող աղայ ամ ինչ որ էին ժամանակի տղացը գիտէին: Եւ կամ ըստեմու անտարբերութիւնը հանդէպ այս գեղեցիկ ուսման:

9. Հոս Փոսփոքրակեան բառը է՝ Բարդգդին ունեցած լուսոյն նմանութիւնը: Մինչդեռ Անանիս Դերակացի, կը գրէ (տես Հին հուստաց Հայոց Աւերանի էջ 128 ԵՆԹ. 2) «Ոմանք կարթ ծիրանագու աստեղն... Այլ ոչ է այդ ամենայն, այլ բաղկեալ հոտ է, և մանր աստեղաց ցուլացում լուսոյ»:

10. Հնդկերկը իւր գերբը 12 զուլաներու բաժնած է, և հետեւեալներն են Ա. Մեծ տեղեւածը (Թարգմանած զուլանիս). Բ. Այսցելութիւն զէպի Արեւ. Գ. Համապարհորդութիւն ներքին մոլորակաց՝ Գայլածու և Արուսեակ, Դ. Երկիր, Ե. Լուսնիս երկրի մէջ (լուսին). Զ. Հոստ մոլորակը, Է. Հսկայ մոլորակ մը՝ Լուսնիթագ. Ը. Սքան.

չեւից արեւային աշխարհի՝ Երեւակ. Թ. Արեւային զուլանի վերին ուսմանները՝ Ուրանոս և Պոսիդոն. Ժ. Գիտաւորք. ԺԱ. Թոռիլ աստեղց և երկնացարինց ԺԲ. Ուր քնց: Այս 12 զուլաներու մէջ ամբողջ տեղեկութիւնը կը բացատրէ գեղեցիկ կերպով իւր թէ վիպա-աստեղութիւն մ'է որ կը զբէ:

11. 1887 ին Պարսիս աստեղագիտական համաժողովին մէջ որոշեցին բոլոր երկնցի լուսանկարը առնուլ Աշխարհիս զանազան դիտարաններէն, ի սկզբան 18 էին հիմա 22ի բարձրացան, և իւրացանելու դիտարանին սահմանուած է որոշեալ թուով իրենց երկնցին լուսանկարը առնուլ, որով բոլոր երկնցը զբէթէ 42000 ընկալուլ ապակիներու մէջ պիտի ամփոփուի, ամէնքը Նոյն չափով պիտի տպուի Նոյն թուով վրայ Պարսիս մէջ: Միայն մինչև 12-15 կարգի աստեղաց համար է ընդհանուր աստեղահամարը, որուն մէջ պիտի ունենանց տպուած 100 միլիոն աստեղներ: Այս հսկայ գործն պիտի աւարտի 1925ին հասանօրէն և պիտի ըլլայ երկնքի պատկեր ցանկերորդ դարու, և աւանդ մը ապագայ սեբունդին որպէս զի կարենայ բաղդատել իր ժամանակի երկնքին հետ զանկու համար աստեղաց շարժումները և իրենց ուղղութիւնը:

12. Բայց զիտակ մը զոնեայ 90 կամ 40 անգամ մեծցնող ըլլալու է որպէս զի Լուսնիթագի սկաւառակը կարենայ նշմարել:

13. Աթո՛ւ բառը հեղինակը Կասիոպէի սեղ գրած է:

14. Թուլման Զին՝ Պեղատոսի տեղ արուած է. տես Հին հուստաց հայոց էջ 142:

Հ. Խորէն ՍԻՆԱՆ

ՀԵԳԵՈՒԹԻԻՆ ԱՌԱՆԿՐՈՇՍ

ԿՐՈՇԳԻ ԹԳՈՒՏԸ

Ով որ մակերևութաբար կը նայի քրիստոնէական կրօնքի վրայ, կարելի է որ առաջին տեսութեամբ անհաւատալի դատէ. բայց երբ լրջութեամբ քննութեան առնուլ, պիտի ստիպուի իւր համոզմունքով կրկնել Լաբրիէրիին հետեւեալ խօսքերն, որ ըսելէն առաջ ինքը ծիծաղեր է. «Եթէ իմ կրօնքն մոռը ըլլար, կը խոստովանիմ ըսելու. Ահա գեղեցկագոյն լաբրուած թակարթ մը, որքան որ կարելի է երեւակայել, և թէ անկարելի պիտի ըլլար որ և ինչ փախուստ մը տալ մէջն չինկնալու համար»:

(Նխարագիրք. զլ. 16):

Կայ քրիստոնէական կրօնքի մէջ մէկ սքանչելի ճանաչում մարդկային սրտի: Արգիւելու համար որ անձնասիրութիւնը չապականէ զանիկայ, կրօնքն անոր հիանալի նպատակ մը կը ներկայացնէ այս աշխարհէս դուրս: Մարդ քաջալերուած այդ նպատակին հասնելու յոստով, անշահասիրութեան հետեւ կ'ըլլայ, հետզհետէ բարձրանալով դէպ ի անձնասիրութիւն վերցուր կրօնքը, կը տիրէ անձնասիրութիւնն և միայն իր շահու ետեւն կըլլայ: